

ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ (ԳՐԵԹԷ) ՃԱՆՉՑԱԻ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ՌՄԲԱԿՈՇՈՒԹԻՒՆՆԵՐԸ
26Ն ԴԱԴՐԻՐ

Ինչպէս զրած էինք, նախազահական հրամանադրով Գերագոյն Խորհուրդի արտակարգ նիստ պիտի դումարուէր Չորեքշաբթի, Յուլիս 8, ժամը 17-ին, օրակարգի նիւթ ունենալով Գ. Խ...-ի նախագահ՝ Բարդէն Արարքեանի հրաժարականը: Նիստի սկիզբին, ուրեմն հարցը քուէարկութեան կը դրուէր Բարդէն Արարքեանի ելոյթէն ետք: Ան կը կրկնէր թէ Ազգային Դաշինքի առաջարկած բանաձեւը (նախորդ շարթուան) հակօրինական նկատած էր եւ ուրեմն իր հրաժարականը կուտար: Կը մնար ազդ. դաշինքին մեծամասնութիւն ապահովել: Քուէարկութեան ատեն սակայն (Արարքեանի հրաժարականի) թեր կը քուէարկէին Տ1 երեսփոխան, դէմ՝ 52 եւ ձեռքնպահ՝ 22: Երկու երրորդի մեծամասնութիւն մը անհրաժեշտ ըլլալով, այս հարցը կը փակուէր, ինչ որ չէր նշանակեր թէ ամէն ինչ կարգադրուած է: Ընդհանրապէս, ընդդիմադիրները այս անգամ այլ ելք մը դատած էին եւ ժողոված 90 ստորագրութիւն ապահովելով Գերագոյն Խորհուրդի արտակարգ նիստ, օրակարգ ունենալով Ղարաբաղի իրավիճակի քննութիւնը: Այլ խօսքով՝ retour à la case départ, քանի որ 90 ստորագրութիւն կը բաւէ, որպէսզի նիստ հրաւիրելը պարտաւոր դառնայ: Բարդէն Արարքեան նախընտրութիւն տուած է այլ ելքի մը, դիտել տալով թէ պէտք չէ կրկին փապուղի մտնել, լաւագոյն է Երկուշաբթի սկիզբի Գերագոյն Խորհուրդի հերթական նստաշրջանը:

Ընդդիմադիրները (Ազդ. Դաշինք) կը ներկայացնէին միշտ չորս կէտերէ բաղկացած բանաձեւ մը, որ անցեալ շարթուալ 2-րդ կէտին համար կը բախէր նախագահին եւ Հ.Հ.Ծ.-ի ընդդիմութեան: Բ. Արարքեան առաջարկած է սահմանափակուել 3 կէտերու եւ 2-րդ կէտին ներկայացուցած է տարբերակ մը ուր բոլոր թէ Հայաստան չի կրնար ստորագրել որեւէ միջազգային փաստաթուղթ որ դէմ ըլլայ Ղարաբաղի բնակչութեան ինքնորոշման իրաւունքներուն (ընդդիմութիւնը կը պահանջէր՝ ուր Ղարաբաղը Ազրբեջանի մաս կազմող հողամաս նկատուի): Այս ձեւն ալ հաւանութիւն ստացած չըլլալով, Բ. Արարքեանի զիջում մը ըրած է ու հաւանութիւն տուած այլ տարբերակի մը (2-րդ կէտը) եւ բանաձեւը քուէարկուած է լայն մեծամասնութեամբ. -- թեր 169, դէմ՝ 3, մէկ ձեռնպահ: Ստորեւ երեք կէտերը. --

1. -- Սատար կանգնել 1. Ղարաբաղի Հանրապետութեան եւ անոր բնակչութեան իրաւունքներու պաշտպանութեան:
2. -- Հայաստանի Հանրապետութեան համար անընդունելի համարիլ միջազգային կամ ներպետական փաստաթուղթերու ստորագրութիւն, ուր Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը նշուած ըլլայ Ազրբեջանի կազմի մէջ:
3. -- Յանձնարարել Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը անհրաժեշտ միջոցներու ապահովումը:

րաժեշտ միջոցներու ձեռնարկել զօրակոչը արդիւնաւէտ իրականացնելու ստեղծուած իրավիճակին համապատասխան պատշաճ կարգ ու կանոն հաստատելու, կազմակերպուած յանցադրօնութիւններու դէմ պայքար ծաւալելու ռազմական գաղանխքներու պահպանութիւնը ապահովելու ուղղութեամբ:

Արդ 2-րդ կէտն է որ կը մեկնարանուի նաեւ օտար թերթերու կողմէ («Լիպէրաւիստ», «Եւրոպ», «Եւրոպ», «Նորայր» անուղղակի աւելի ճիշդ՝ լուրջայն (implicite-ment) ճանաչումը Ղարաբաղի Հանրապետութեան Հայաստանի կողմէ, ինչ որ կրնայ բարդութիւններու գուռ բանալ: Արդարեւ, ցարդ 1. Տէր -- Պետրոսեան, Գ. Յարութիւնեան եւ այլ պատասխանատուներ միշտ լսացատրած են թէ նախ ուրիշները պէտք է ճանչնան, որովհետեւ Հայաստանի կողմէ ճանչնայ ուղղակի փապուս պելլի ստեղծած կ'ըլլայ Ազրբեջանի հետ: Հիմա, կը մնայ սպասել ու տեսնել թէ ի՞նչ պիտի պատահի:

Ռմրակոծութիւնները (գրադով) կը շարունակուին Ղարաբաղի զիւղերուն վերայ Ազգամէն, վերջին 48 ժամերուն՝ Բերդաշէն, Նորչէն, Աւդուռ:

**

Հելսինքիի մէջ, Յուլիս 9-ին կը բացուէր ՍԷ - ԷՍ - ՍԷ - Ը-ի (նախկին Հելսինքիի համաձայնագիր) 3-րդ վեհաժողովը: 52 անգամ երկիրներ կան (ներառեալ Հայաստան), բայց Եւրոպայի «պատժուած է» եւ չի կրնար մասնակցել:

Հայաստանի կողմէ Հելսինքի էին արդէն Յուլիս 8-ին, Գաղիկ Յարութիւնեան եւ Բաֆֆի Յովհաննէսեան: Հոռմէն հոն դացած էր նաեւ Քրիսթիան Տէր-Ստեփանեան:

Գ. Յարութիւնեան եւ Բ. Յովհաննէսեան հանդիպում ունեցած են Ֆինլանտայի նախագահ՝ Մանուել Կոյվեստոյի հետ եւ քննարկուած են երկու երկիրները շահազրկող հարցեր նաեւ Ղարաբաղի վերջին իրադարձութիւնները:

Նոյն օրը, Գ. Յարութիւնեան ստորագրած է Եւրոպայի Ապահովութեան եւ Գործակցութեան ժողովին (ՍԷ - ԷՍ - ՍԷ - Ը) 1975-ի Հելսինքիի եզրափակիչ Ակտը:

Յիշենք որ 1975, Օգոստոս 1-ին, 35 պետական եւ կառավարական ղեկավարներ, որոնք կը ներկայացնէին ամբողջ Եւրոպան (բացի՝ Ալպանիայէ) յաւելեալ Միացեալ -- Նահանգներ եւ Գանատա կը ստորագրէին եզրափակիչ Ակտը, որ իսկական բարի վարուց օրինակիք մըն է Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ: Երեք ժողովներ յաջորդած են՝ Պելկրատ (1977 - 78), Մատրիտ (1980 - 83) որոնք կը հաստատեն խոր տարակարծութիւններ:

Երկրորդ վեհաժողովը կը դումարուէր Փարիզ, 1990-ին, ուր կը քուէարկուէր «Փարիզի Ուխտը», որ կը թաղէ ջլամարտը: Անկէ ի վեր Պետութիւններու թիւը 52-ի հասած է:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Ա.Լ.ԵՐԻՈՅ վարչապետը՝ Ղոզալ պաշտօնազրկուած է եւ իր տեղը նշանակուած է Պելայիա Ապտեալամ:

ԼԵՀԱՍՏԱՆԻ կառավարութեան գլուխը դրուեցաւ կին մը -- Հաննա Սուչոքա, 4 տարեկան, որու գործը այնքան դիւրի չէ: